DAILY ARMENIAN PRAYERS

Հայր մեր

Հայր մեր, որ յերկինս ես,
Սուրբ եղիցի անուն Քո.
Եկեսցէ արքայութիւն Քո.
Եղիցին կամք Քո որպես յերկինս՝ եւ յերկրի.
Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր.
Եւ թող մեզ զպարտիս մեր,
որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց:
Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն,
այլ փրկեա զմեզ ի չարէն.
Զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս: Ամեն:

Ողջոյն քեզ Մարիամ

Ողջոյն քեզ Մարիամ. լի շնորհոք Տէր ընդ քիզ.
Օրհնեալ ես դու ի կանայս եւ Օրհեալ է պտուղ որովայնի քոյ Հիսուս:
Սրբուհի Մարիամ, Մայր Աստուզոյ, բարեքիոսեա՛ վասն մեր մեղաւորացս,
այժմ եւ ի ժամու մահուան մերոյ. Ամեն:

Փառք Հօր

Փառք Հօր Եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԻ ԱՂՕԹՔ

Ամենագթած Փրկիչ, գիտեմ ես քեզի դէմ մեղանչեցի, քու սուրբ օրէնքներուդ հակառակ գործելով: Իմ մեղքերովս, քեզմէ աւելի բարձր դասեցի արարածները եւ հաճոյքներս: Թէեւ պատիժի արժանի եմ, սակայն բարերար Յիսուս, տուր շնորհքը ճանչնալու յանցնաքներս, անոնց վրայ զղջալու, անկեղծօրէն զանոնք խոստովանելու եւ թողութեան արժանի ըլլալու: Ամէն:

Սուրբ Միքայէլ, երկնային հրեշտակապետ

Ո՛վ Սուրբ Միքայէլ, երկնային հրեշտակապետ, պաշտպանէ՛ մեզ, երբ կը պատերազմինք ընդէմ խաբեբայ Սատանային: Ո՛վ Տէր, աղերսագին կը խնդրենք, դո՛ւն եղիր մեր ապաստանը եւ սաստէ հակառակորդ թշնամին: Ո՛վ Երկնային փառապանծ իշխանդ՝ Սուրբ Միքայէլ, այն զօրութեամբ, որ Աստուած քեզի յանձնեց, կրկին դէպի դժոխք դարձուր Սատանան եւ իրեն հետեւող բոլոր դիւային գունդերն ու պիղծ ոգիները, որոնք երկրի վրայ շրջելով՝ կը փորձեն կորուստի մատնել հաւատացեալներու հոգիները:Ամէն: